

«ՎԵՑՈՐԵԱՅԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՈՒ ԲՆԱԳԻՐԸ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գիտության մեջ ընդհանրացած կարծիք կա, որ Բարսեղ Կեսարացու (329—379) «Վեցօրեայ» երկասիրությունը հայերենի է թարգմանվել տակավին V դ. առաջին կեսին՝ մեր մատենագրության սկզբնավորման շրջանում<sup>1</sup>։

Հին թարգմանությունների ժամանակի ճշգրտման, թարգմանության պարագաների քննության, թարգմանիչների գործունեության գնահատման առումով հատկանշական է Մ. Աբեղյանի հետևյալ դիտողությունը. «Այժմ դժվար է ճիշտ որոշել, թե ե՞րբ և ո՞րքան թարգմանություններ են արել մեր գրականության առաջին դարերում։ Դրանց մեծ մասի ժամանակն ու թարգմանիչներն անհայտ են։ Շատ բան կորած է, կլինեն երկեր էլ, որ դեռ երևան չեն եկել։ Բայց ինչ որ մինչև այժմ մնում է և հայտնի է, դա էլ ցույց է տալիս, որ հին թարգմանական գրականությունը շատ հարուստ և բազմակողմանի է եղել»<sup>2</sup>։ Բանասիրական-աղբյուրագիտական հանգամանալից քննությունը, սակայն, նշանակալի ճշգրտումներ է մտցնում թվարկված խնդրական հարցերի մեջ։ Այսպես, ձևագրի ընդօրինակողներից մեկը անհրաժեշտ է համարել տեղեկացնել, թե «թարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ, ի ձեռն նշմարաբանից թարգմանչաց մերոց»<sup>3</sup>։ Այս հաղորդումը բավական վաղ

1 Գործիս ենթագրելի հրատարակիչ Արսեն Բագրատունին Առաջաբանում գրում է. «Թե «Վեցօրեայ» ճառերը թարգմանեալք են աներկբայ յերանաշնորհ նախնեացն մերոց հինգերորդի դարուն» (տե՛ս «Արքայ Բարսեղի եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացոյ՝ ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, Վենետիկ, 1830»)։ Երկը վարդապետաց բառարանում (ՆՀԲ) «Վեցօրեան» բնութագրվում է «հին թարգմանություն քաջ հայկաբանությամբ», ուր, անտարա-կույս, «հին» որակավորումը ևս V դ. է հուշում (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836, հատ. I, Առաջաբան, էջ 19)։ Բանասեր Ա. Սուբրյանը «Վեցօրեան» իրավա-ցիտրեն դասում է մեր մատենագրության սկզբնավորման շրջանի առաջին թարգմանություն-ների շարքում (տե՛ս Ա. Սուբրյան, Ա. Բարսեղ և իր երկասիրությունքն, «Բազմավեպ», 1873, էջ 123), իսկ Ն. Բյուզանդացին՝ «Եզնիկյան հայկաբանությամբ գրված մատենագրու-թյանց» թվին (տե՛ս Ն. Բյուզանդացի, Հայկական բառաքնություն, Կ. Պոլիս, 1880, էջ 62)։ Գ. Զարբհանյանի բնութագրմամբ՝ Կեսարացու գործերը «...հասած են առ մեղ խորասանութեամբ նախնեաց ըստ մեծի մասին յոսկեղէն գարու մեր մատենագրութեան, և այլք կրտսիրադոյնք ժամանակաւ» (տե՛ս Գ. Զարբհանյան, Մատենագրարան հայկական խորհրդանութեանց, Նախնեաց (Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 325—326, Բանասեր Հ. Թորոսյանը գրում է. «Անտարակույս է, թե Վեցօրեայ ճառերուն թարգմանությունը մեր ու-կեղարու ամենեն փայլուն շրջանին կսլատկանի. և անոր հրաշակերտներեն մին է» (տե՛ս Հ. Թորոսյան, Ա. Բարսեղ Կեսարացի, իր «Վեցօրեայ» ճառերը և հայերեն թարգմանու-թյունը («Բազմավեպ», 1934, էջ 331)։ Այլադան առիթներով «Վեցօրեային» անդրադարձած մյուս հայագետները ևս այդ ընդհանրացած կարծիքն են հայտնել (Մ. Աբեղյան, Ավ. Տեր-Պո-ղոսյան, Հ. Աճառյան, Բ. Վարժապետյան և ուրիշներ)։

2 Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 109։

3 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄԱՄ), ձեռ. N° 10258, էջ 2ա, ձեռ. N° 5686, էջ 2ա, Հմմտ. Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխի-

շրջանից է, քանի որ կրկնվում է իրարից շրջաօրինակված ձեռագրերում և բխում հնագույն գաղափար օրինակից: Նրանում երկու ուշագրավ տեղեկություն կա. ա) «Վեցօրեան» թարգմանվել է հունարեն բնագրից, բ) թարգմանությունը կատարվել է «ճշմարտաբանից թարգմանչաց» ձեռքով: Վերջին արտահայտությունը, անտարակույս, վերաբերում է Մաշտոցի և Սահակի այն առաջին թարգմանիչ-աշակերտներին, որոնք Մ. Դրբից հետո ձեռնամուխ եղան եկեղեցական արարողության ու վարդապետության համար կարևոր նշանակություն ունեցող գործերի թարգմանության: Ընդ որում, առաջին ճշմարտաբան թարգմանիչների գործունեությունը (իմա՝ Եզնիկյան դաս) V դ. առաջին կեսից այս կողմ չի անցնում, իսկ դա նշանակում է թե «Վեցօրեան», ըստ հիշյալ վկայության, թարգմանված պետք է լիներ մոտավորապես 420—450 թթ. ընթացքում: Բնագրադիտական քննությունից պարզվում է, որ այս եզրակացությունը սոսկ վարկած չէ: Հայերեն թարգմանության մեջ կան տեղիներ, որոնց ուսումնասիրությունը ուշագրավ կովաններ է ընձեռում: Այսպես, օրինակ, «Վեցօրեայի» բնագրում և հայերեն թարգմանությունում կարգում ենք.

«...()... քնացր իմն են, ասեն, յաշխարհին երկպեցոց յովկիանոս, որ երբեմն բուցանեն զյաւելուածս լիութեան իւրեանց, և երբեմն զիջանէ ի լիութենէ անտի. և այն, ասեն, ըստ գնացից լուսնին փոփոխի: Եւ որ զայնս պատմեն՝ մեռաւորք և սահմանակից են երկպեցոց: Ի սկիզբն ծննդեան լուսնին անշարժ կան, ասեն, գնացր խաղացիցն, և ըստ յաւելուլն և ըստ աճելն լուսնի՝ սկսանի զեռալ և շարժիլ...»<sup>5</sup>:

Բեռված համեմատությունը ցույց է տալիս, որ բնագրի ու լատինական-դուցմ տեքստերի հայերեն թարգմանության մեջ դարձել է «յաշխարհին երկպեցոց», այսինքն՝ հունարեն «նեղուց» բառը գրչական նմանության հիմքի վրա թարգմանիչն ընկալել է իբրև «աշխարհ երկպեցոց» (իմա՝ երոպացոց): Որ հայերեն թարգմանության «յաշխարհին երկպեցոցը» արդյունք է բնագրի ու ճիշտ ընկալման՝ երևում է նաև «Վեցօրեայի» այլ թարգմանությունների օրինակից: Ռուսերենում կարգում ենք. «Ибо еврипы при прочих видах луны текут в ту и другую сторону; а во время рождения ни на минуту не остаются в покое, но находятся в волнении и непрерывном колебании, пока луна, сделавшись опять видимою, не введет некоторой последовательности в обратных течениях»....<sup>6</sup>.

Թարեանց, Վիեննա, 1885, էջ 638ր, 2. Ոսկյան, Յուդակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի, Վիեննա, հատ. Բ, 1963, էջ 82 (այս և հետագա ընդդժմները մերն են—Կ. Մ.):

<sup>5</sup> J.-P. — Migon, Patrologia Graeca, Paris, 1857, t. 29, էջ 144.

<sup>6</sup> «Վեցօրեայ», էջ 133.

<sup>7</sup> «Творения иже во Святых отца нашего Василия Великого, часть I, Беседы на Шестоднев», М., 1891, էջ 99.

Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, խոսքը ջրերի շարժման մեջ գտնվելու մակերևացության և տեղատվության մասին է, այսինքն՝ բնագրի «*Экспедиция в Армянские горы*» և «*Армянские горы*» վրացերեն միջնադարյան թարգմանություններում ևս բառս իբրև հատուկ անուն չի ընկալված<sup>5</sup>։

Հայերեն թարգմանության նշված վրիպումը նույնությամբ կա թե՛ Կողմացու, և թե՛ Շիրակացու տեքստերում.

## ԿՈՂԲԱՅԻ

«Եւ յերոպմ տեղիք ինչ են ծովուց,  
որոց ջուրն ըստ աճել լուսնին՝ աճէ, և  
ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝  
պակասէ»:

(«Եղծ աղանդոց», էջ 150)<sup>9</sup>:

## ՇԻՐԱԿԱՑԻ

«Եւ գնացք իմն եւն ասեն յաշխարհ  
 ընդ նորոպացոց, յովկիանոս, որ եր-  
 բեմն ցուցանեն յաւելուած լիութեան.  
 Է Լորբեմն զիջանին ի լիութենէ անտի.  
 Է ալս ասեն ըստ գնացից լուսնի փո-  
 փոխին: Ը սկզբան ծննդեան լուսնի  
 անշարժական ասեն գնացք խաղացիցն  
 Է ըստ աճելն լուսնի՝ սկսանին շարժել  
 Է գեռալ»<sup>10</sup>:

Շիրակացու վկայակոչված հատվածի իմաստը որոշակի է՝ խոսքը վերաբերում է «յաշխարհին եւրոպացոց», մինչդեռ Եղնիկի մոտ կարող է կասկած առաջանալ. արդյո՞ք ԵՅՐԱՊՈՂ-ը «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունում նույնությունը նախապես տառադարձված չի եղել հայերենի, իսկ հետագայում՝ ընկալվել իբրև «Եւրոպա»: Սակայն ներգոյական հոլովացուցչի առկայությունը վկայում է, որ ի սկզբանե բառս իբրև «Եվրոպա» հատուկ անուն է ընկալվել: Այս դրույթը ստուգելու նպատակով անհրաժեշտ համարեցինք դիմել Կողբացու երկի առկա թարգմանություններին՝ ձշտելու համար մեզ հետաքրքրող բառի ընկալումը թարգմանիչ-ուսումնասիրողների կողմից: Պարզվում է, որ իբրև «Եվրոպա» են թարգմանել և՛ Լ. Մարիեսը (Il y a même en Europe certains endroits<sup>11</sup>), և՛ Վ. Զալոյանը («В Европе есть такие моря, воды которых»<sup>12</sup>), և՛ Ա. Արրահամյանը (սեպ Եվրոպայում ծովերի ինչ-որ տեղեր կան...) <sup>13</sup>:

<sup>7</sup> «Древнегреческо-русский словарь», М., 1958, т. I, ст. 705.

8 ბასილი დიდი, ექუსთა დოეთაჲ. გიორგი მთაწმიდლის თარგმანი... გამოსცა მ. კახაძემ, თბ., 1947, *ტ. 134, წამთა*. უძველესი რედაქციები ბასილი კესარიელის „ექუსთა დოეთაჲსა და გრიგოლ ნოსელის თარგმანებისა კაცისა აგებულებისათვის...“ გამოსცა... ილია აბთულაძემ, თბ., 1964, *ტ. 78, II. ყაჩაღბან რარკ და მარკ რაგარარკ*. „გვრიბი-ზღვის სრუტე, კერძოდ ევბეის ზღვისა, რომელიც ჰყოფს საბეოძენთს (ტყიყ-ი ბიქი ზნოიფ, მას-ნაქირაყსა ტყიქს ბიქი, იერ რაძანიოქ და ჯიზნათანერ)“.

<sup>9</sup> Բնագիրը նույնական է նաև Լ. Մարիեսի Հրատարակության հետ (Paris, 1959, էջ 503, § 312):

10 Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Տիէզերազիտուիին և տոմար: Աշխատությամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 43:

<sup>11</sup> Eznik de Kolb, *De deo*, Traduction française, notes et tables par Louis Mariès et Ch. Mercier, Paris, 1959, էջ 648, § 312: (Ծանոթագրության մեջ նշվում է պարրերության իմաստի ոչ հստակ լինելը):

<sup>12</sup> Езник Кохбаци, Книга опровержения, перевод, предисловие и примечания В. К. Чалояна, Ереван, 1968, *т. 131*.

13 ՆՂԻԿ ԿՈՂՐԱՏԻ, ՆՂԺ աղանդոց, թարգմ., ներած. և ծանոթագրություններ  
Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻ, ԵՐԽԱՆ, 1970, էջ 137:

Կողբացու և Շիրակացու հատվածներում հունարեն «նեղուց» հասկացության վերածվելը «Եվրոպա» աշխարհագրական տեղանվան հիմք է տալիս պնդելու, որ թե՛ Կողբացին, և թե՛ Շիրակացին օգտվել են Կեսարացու «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունից, այլապես ոչ մի կովան շունենք կարծելու, թե «Վեցօրեայի» թարգմանչի նշված վրիպումը, բնագրի ոչ ճիշտ ընկալումը, հայերեն թարգմանությունից ամենևին անկախ, նույնությամբ կրկնվել է Կողբացու, իսկ այնուհետև նաև Շիրակացու մոտ<sup>14</sup>։ Արդ, եթե իրական է Կողբացու «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունից օգտվելու փաստը (կան բաղմամբիվ ընդհանրական այլ տեղիներ), ապա անկասկած է, որ «Վեցօրեան» հայերենի թարգմանված պեսք է լինել V դ. առաջին կեսին, մինչև 449 թ., որից հետո Կողբացին մահացած է ենթադրվում<sup>15</sup>։

Այժմ անդրադառնանք «Վեցօրեայի» որ լեզվից թարգմանված լինելու խնդրին։ Ժամանակին հայագիտության մեջ կարծիք է հայտնվել, թե այն հայերենի է թարգմանվել ասորերենից։ Նման պարագայում հարց է առաջանում՝ «Վեցօրեայի» քանի՞ թարգմանություն ունենք։ Տաշյանը Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 249 ձեռագիրը նկարագրելիս վկայակոչելով Կեսարացու «Վեցօրեայի» «Մի ոք ի քննողաց զրպարտեսցէ զԱստուծոյ զստուգութիւնն» սկսվածքով «Յառաջաբանութիւնը», գրում է. «Ասորական գույն ունին այս տողերն ալ։ Բարսղի բուն գործքն ասորի բնույթի մը հետքերը շատ յաճախ կցուցնեն. արդեն՝ լատ ավանդելույն՝ երկու թարգմանությունք եղած են»<sup>16</sup>։ Նա, այնուհետև, հավանաբար հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի հետ համեմատելուց հետո, բնագրի և թարգմանության անհամապատասխանության առիթով նկատում է. «Ասոր պատճառն ասորի բնագիրն ըլլալու է, որմէ հատված մը տես Բրիտանական թանգարանի Cod. add. 17, 143 ձեռագրին մեջ»<sup>17</sup>։

Ն. Բյուզանդացին «Վեցօրեայի» առկա թարգմանությունը կատարված է համարում ասորերենից. «Ձգօն, Եփրեմ, Եսեբիոս, յասորոյն թարգմանեալ են, ամեն երկբայութենէ դուրս է այս. արդ իմ քննութեանցս համեմատ՝ Մա-

14 Բանասեր Հ. Թորոսյանը Եզնիկի և Կեսարացու առնչությունը քննելիս նշված օրինակի իման վրա եզրակացնում է. որ Եզնիկ Կողբացին օգտվել է «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունից (տե՛ս Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 421)։

15 Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի V դարում թարգմանված լինելու օգտին կա նաև այլ կովան։ Ձեռագրերում վկայակոչվում է այն միտքը, որ «Վեցօրեան» ուշումնական ձեռնարկ է եղել։ «Նու հոգիապատում աստուածաբանութեամբ թարգմանական բացայայտութեամբ ի մտառութիւն դիւր ուսման ուսումնասիրող եկեղեցւոյ մանկանց...» (ՄԱՄ, ձեռ. № 6731, էջ 67ր—68ա, հմմտ. ձեռ. № 4001, էջ 118ա)։ Հիրավի, Կեսարացու գործը բովանդակությամբ շատ էր պատշանում նոր հիմնադրվող դպրոցների պահանջներին։ Մաշտոցը և Երա աշակերտները առաջինը ձեռնարկեցին Սողոմոնի՝ իմաստություն և խրատ ուսուցանող Առակների թարգմանությունը, որովհետև դրանք բովանդակալից էին, հասկանալի և ուսուցողական, միանգամայն հարկը առաջադրված նպատակին (մանրամասն տե՛ս Ա. Ղանալանյան, Թե ինչո՞ւ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 113—123)։ Ճիշտ նույն նպատակով կարևոր դեր կարող էր խաղալ նաև Կեսարացու «Վեցօրեան»-ի վերջո, «Վեցօրեայի» V դ. թարգմանված լինելը համընդհանուր ճանաչում ստացած իրողություն է լեզվի առումով։

16 Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 639ա։

17 Նույն տեղում, էջ 640ա։

կաբայեցուց զիրք ևս յասորոյն են, Հարանց վարք՝ (մասամբ) նոյնպէս, Բարսղի Վեցօրեայն՝ նոյնպէս...»<sup>18</sup>:

Բանասեր Թ. Թոռնյանի բնութագրմամբ՝ «Վեցօրեայի» «Հայերեն թարգմանությունն ունի ընդհանուր նույնություն հունարենի հետ, բայց լի է տարբերություններով, որոնք ասուեմքն բնագիր մը ենթադրել կուտան»<sup>19</sup>:

Տաշյանի, Բյուզանդացու և Թոռնյանի բերված դիտողություններն ապացուցող որևէ սկզբնաղբյուր վկայություն մեզ հայտնի չէ<sup>20</sup>: Այդ իմաստով առկա միակ տեղեկությունը հետևյալն է. Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 217 ձեռագրում (Ճառքնոց) ընդօրինակված Կեսարացու «Ճառք ՎՊահոցի» լուսանցքում «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մասին ասված է. «Զ օրեայ գիրքս երկու թարգմանչաց և յարինած. վասն որոյ ուրոյն ուրոյն են»<sup>21</sup>: Սուկայն բերված միտքը կարող է երկակի մեկնաբանվել. ա) «Վեցօրեան» երկու անխափան թարգմանություն է ունեցել, բ) միակ թարգմանությունը երկու թարգմանիչներ են իրացրել: Բացի այդ՝ հայագիտության մեջ մի առիթով արձանագրվել է, որ «Վեցօրեայի» ասորերենից թարգմանված լինելու ինդիքը տակավին «բնագիրներու ամբողջական համեմատական ուսումնասիրություն մը կպահանջե»<sup>22</sup>:

Այդուհանդերձ՝ ի՞նչ հիմք ունեն «Վեցօրեան» ասորական թարգմանություն դիտող բանասերները: Ն. Բյուզանդացին «Վեցօրեայի» հայերեն թարգմանության ինդիքն առանձին չի անդրադառնում և իր վերը նշված դիտողություն շուրջ որևէ կովան չի բերում: Իսկ որքանով են համոզիչ Տաշյանի փաստարկները. ա) ասորական երանգ ունեցող «Յառաջաբանութիւն», բ) հայերեն թարգմանության և հունարեն բնագրի անհամապատասխանություն, գ) ավանդություն երկու թարգմանության երբեմնի գոյություն մասին:

Տաշյանի վկայած «Յառաջաբանութիւնը», ինչպես պարզվում է «Վեցօրեայի» ձեռագրերի, բնագրի և առկա թարգմանությունների համեմատությունից, կապ չունի բնագրի հետ և, հարկավ, գրիչների հետագա հավելում է: Այդ է հուշում ամենից առաջ վերջինիս բովանդակությունը: Ավելին, Տաշյանի ձեռքի տակ եղած՝ ասորական երանգ ունեցող «Յառաջաբանութեամբ» ձեռագիրը, իբր իսկ վկայությամբ՝ «կնույնանա տպագրին», թեև կան շատ այլընթերցումներ, «բաղմամբիվ անմտադրությունը և սխալմունք»<sup>23</sup>: Միաժամանակ հայտնի է, որ տպագիրը Առաջաբան չունեցող ձեռագրախմբին է պատկանում և թարգմանված է համարվում հունարենից: Արդ, եթե երկու տարբեր լեզուներից թարգմանված դիտվող միևնույն գործի տարբերությունը լսկ գրչական

18 Ն. Բիւզանդացի, Առ դրասէր Ատոմ (տե՛ս «Մասիս», 1884, 14 մարտի, հմտ. նույնի՝ Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը, Տփղիս. 1900, էջ ԻԴ, 30):

19 Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցումաճք ի մատենագրութեանց նախնեաց, Վիեննա, 1910, էջ 9:

20 Ի դեպ, բանասեր Ն. Անդրիսյանը գրում է. «Վեցօրեայք բանասերներու միտքերը ավելի հակամետ են ասորերենի թարգմանված կարծելու: Այս տարակույսը շատ բանավոր է» (Ն. Անդրիսյան, Գեղեցիկը լեզվին մեջ, «Բաղմամբիկ», 1907, էջ 516):

21 Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 555ա, հմտ. Գ. Հովսեփյան, Խաղրակյանը կամ Պոռնյանը հայոց պատմության մեջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 396:

22 Է. Տրիստեն, Ս. Բարսղի հայ ձեռագիրներու հավաքածոն (տե՛ս «Բաղմամբիկ», 1954, էջ 285):

23 Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 640ա:

է և իմաստային որևէ արժեք չի ներկայացնում, նշանակում է երկու թարգմանության մասին խոսք չի կարող:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Վեցօրեայ» տասնչորս գրչագրերից չորսում (№№ 620, 3457, 10258, 5686) ընդօրինակված է նշված «Ճառաբանութիւնը»: Դրանց համեմատությունը մնացած ձեռագրերի հետ պարզում է, որ այլ թարգմանություն հուշող բնագրային հեռացում ձեռագրերից որևէ մեկում նկատելի չէ: Եվ, բացի այդ, ասորական թարգմանություն համարվող, Առաջաբան ունեցող ձեռագրերից երկուսում «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մասին ասված է. «Թարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ...»<sup>24</sup>: Ինչ վերաբերում է «Վեցօրեայի» երկու թարգմանության շուրջ եղած ավանդութիւնը, ասյա պետք է ձշտել՝ խոսքը երկու թարգմանչի՞ մասին է, թե՞ թարգմանության: Բացառված չէ, որ «Վեցօրեան» իրոք երկու թարգմանություն ունենա, մեկը՝ կատարված ասորերենից, մյուսը՝ հունարենից: Բայց ներկա դեպքում մեր ձեռքի տակ եղած և բանասիրությանը հայտնի ձեռագրերը, տպագիրը, ինչպես նաև բնագրագիտական առկա հետադոտությունները խոսում են մեկ թարգմանության օգտին՝ կատարված հունարեն բնագրից: Հ. Տաշյանի ենթադրության հիմնական պատճառը, կարծում ենք, հայերեն թարգմանության ոչ լիակատար համապատասխանությունն է հունարեն բնագրին, որ միանգամայն այլ հիմք ունի:

«Վեցօրեայի» հունարենից թարգմանված լինելու լավագույն կովանը հայերենում պահպանված հունաբանություններն են և հունարենի հիմքի վրա առաջացած թյուրընկալումները, որոնց տարբեր առիթներով անդրադարձել են հայագետներ Ա. Սուրբյանը<sup>25</sup>, Ս. Նազարեթյանը<sup>26</sup> և Հ. Թորոսյանը<sup>27</sup>: Թարգմանության համեմատությունը բնագրի հետ ցույց է տալիս, որ նախորդ հայագետների վկայակոչած օրինակներով չի ավարտվում նրանում պահպանված հունաբանությունների ու հունարենի սխալ ընկալման իրողությունների ցանկը, այլ կան բնագրից նույնությամբ փոխանցված, բնագրի նորմերով բացատրվող բազմաթիվ բառեր և արտահայտություններ, որոնք կարելի է բացանել հետևյալ խմբերի:

1) Հունարեն բառեր, որոնց հայերեն համարժեքները չգտնելու, գուցե և չնախընտրելու պատճառով թարգմանիչը դրանք նույնությամբ փոխանցում է հայերենի.

| Բնագիր        | Թարգմանություն                   |
|---------------|----------------------------------|
| բանաբանութիւն | (էջ 101) — մանրագորալ (էջ 89)    |
| ստորութիւլը   | (էջ 116) — ստորութիւլը (էջ 104)  |
| փոկը          | (էջ 149) — փոկը (էջ 138)         |
| ղլիինը        | (էջ 149) — ղլիինը (էջ 138)       |
| ներկէսը       | (էջ 149) — ներկէսը (էջ 138)      |
| որ անուանեալ  | (էջ 149) — որ անուանեալ          |
| կուչին սեղակ  | (էջ 149) — կուչին սեղակ (էջ 138) |

<sup>24</sup> ՄԱՍ, ձեռ. № 10258, էջ 3ա, հմմտ. ձեռ. № 5686, էջ 2ա:

<sup>25</sup> Ա. Սուրբյան, նշվ. աշխ., էջ 124:

<sup>26</sup> Ս. Նազարեթյան, Արևիկա. Բարսեղի Վեցօրեայի վրա («Պատկեր», 1892—1893, էջ 541—543):

<sup>27</sup> Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 334—336, 414—416:

|            |                                   |          |
|------------|-----------------------------------|----------|
| κτένεσ     | (էջ 149) — կտինքն                 | (էջ 140) |
| καχλίου    | (էջ 149) — կոքղիք                 | (էջ 140) |
| σπρόβου    | (էջ 149) — ստրումբ                | (էջ 140) |
| καρσβου    | (էջ 149) — կա[րա]պք <sup>28</sup> | (էջ 140) |
| σχημα      | (էջ 149) — սպինք                  | (էջ 140) |
| σχαρον     | (էջ 152) — սկարոս                 | (էջ 142) |
| σπρεου     | (էջ 153) — սստրեսոս               | (էջ 143) |
| σπρόγνος   | (էջ 161) — տրիգոնին               | (էջ 153) |
| βομβυλίδος | (էջ 184) — բոմբիլոս               | (էջ 176) |

Պարզորոշ երևում է, որ թարգմանիչը հետամուտ է վկայակոչված բառերի իմաստի, քերականական ձևի առանձնահատկություններին, ուստի և «*οι*», «*αι*», «*ες*» հոգնակիակերտ մասնիկներ կրող բառերը անխտիր տառադարձվել են հոգնակի նշանակությամբ, իսկ մյուս հոլովական կիրառությունները՝ հայերենի օրինաչափությամբ:

2) Կան նաև դեպքեր, երբ քերականական այս կամ այն նորմը, մասնավորապես՝ հոգնակի նշանակությունը, չի ընկալվել թարգմանչի կողմից և որոշ բառերի հոգնակի իմաստը հայերենի է փոխանցվել եղակիի նշանակությամբ: Այսպես, օրինակ.

| Բնագիր    | Թարգմանություն                |
|-----------|-------------------------------|
| ὄρακοντες | (էջ 149) — դրակոնտէս (էջ 141) |
| μυρταίναι | (էջ 149) — միւռենէս (էջ 141)  |
| εγγχεύει  | (էջ 149) — ենքեղէս (էջ 141)   |
| ξίφαι     | (էջ 161) — քսիփիէ (էջ 153)    |
| πρίονες   | (էջ 161) — պրիոնէ (էջ 153)    |

Առաջին երեք բառերը հունարեն բնագրում ունեն հետևյալ կիրառություններ. «*Καὶ ἐν τούτοις πάλιν ὁ ἀφ' ὧν: ὡρίαι. Δράκοντες γὰρ καὶ αὐραίναι καὶ ἐγγχεύει...*»<sup>29</sup>:

Ընդգծված անվանումները հոգնակի կիրառություն ունեն.

«*ὄρακοντες-ի*» հգ. ուղղականը է՝ «*ὁ ὄρακων*», սեռականը՝ «*ὄρακοντος*», «*ω-ραίναι-ի*» հգ. ուղղականը՝ «*μυρταίνος*», սեռականը՝ «*μυρταίνου*», «*εγγχεύει-ը*» հգակի ուղղականում՝ «*ἐγγχεύει*» և «*ἐγγχεύει*» (համասյուտասխան սեռական հոլովաձևերը՝ «*ἐγγχεύει*» և «*εγγχεύει*»: Արդ՝ վկայակոչված նախադասութեան դիմաց հայերեն թարգմանության մեջ կարգում ենք. «*Եւ դարձեալ այլակերպք այլանշանք, որ անուանեալ կոչին դրակոնտէս և միւռենէս և ենքեղէս...*»<sup>30</sup>: Հայերենը իմաստով հիմնականում համասյուտասխանում է բնագրին, թեև վերջինիս «*τῶντων πάλιν*»-ը (շատերից նորից) անտեսված է: Բացի այդ, թարգմանիչը բնագրի ընդգծված բառերը՝ «*ες*», «*αι*» հոգնակիակերտ ցուցիչները բառամաս

<sup>28</sup> «Կարապք» բառն ունի «եղնարգեզ», «եղչերաբզեզ», «կրար», «ծովախեցգետին» նշանակությունները:

<sup>29</sup> *Migne*, նշվ. աշխ., հատ. 29, էջ 149:

<sup>30</sup> «Վեցօրեայ», էջ 141: Նախորդ և հաջորդ բառերի նմանությամբ բնագրի «*μυρταίναι*»-ն տառադարձվել է «միւռենէս»:

ընթերցելով, նույնությամբ տառադարձել է հայերենի և, վաստորեն, բնագրի առանձին ձևատեսակներ ներկայացնող հասկացություններից յուրաքանչյուրը հայերենում դարձել է եզակի անվանում: Մինչդեռ նախորդ օրինակների նմանությամբ հայերենում սպասելի էր «գրական», «միտենք», «ենթեդեք»:

Նույն հոգնակիակերտ մասնիկի շտաբորոշմամբ պայմանավորված վրիպում կա նաև վերոբերյալ բառերից վերջին երկուսում, որոնք քննարկում ունեն հետևյալ կիրառությունը. «(ὁ) γὰρ ἰσὺς ἔσται. καὶ πρὶν ἐξ<sup>31</sup> (ոչ միայն քսիփիէք և պրիոնէք): Թարգմանիչը բերված միտքը ընթերցել է. «Քանզի ոչ եթէ միայն, որ անուանեալ կոչի Բսիփիւ, պրիոնէ...»<sup>32</sup>: Վերջինիս անհամապատասխանությունը բնագրի հետ, ինչպես տեսնում ենք, երկու բնույթի է. ա) հայերենում կա, այսպես կոչված, հարակից բացատրություն, բ) հոգնակի անվանումների եզակիացում: Բնագրում իրոք «Բսիփիէք» և «պրիոնէք» այն ձևատեսակների մասին է, որոնք միմյանցից տարբերվում են ապրելակերպի, սնման, աճման և այլնի հետ կապված բազմաթիվ հատկանիշներով, ուստի և բնագրի նմանությամբ հայերեն թարգմանությունում պիտի ունենայինք անվանումներիս հոգնակի կիրառություն:

3) «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունում նկատելի է մեկ այլ իրողություն ևս. թարգմանիչը բնագրի այս կամ այն բառ-տերմինը նույնությամբ հայերենի փոխանցելիս երբեմն միաժամանակ տալիս է դրա հայերեն թարգմանություն-բացատրություն:

Այսպես, օրինակ՝

| Բնագիր   | Թարգմանություն                                                      |
|----------|---------------------------------------------------------------------|
| Չիստէ    | (էջ 112) — փսենաս, որ է ի նմանութիւն սերման (էջ 98)                 |
| Դիւքարոս | (էջ 113) — զեկեկտրիոնէ դարձեալ ասեն, թէ և նա հոյս է ծառոյ (էջ 101)  |
| Երբիւն   | (էջ 116) — միւրիկէ, որ ջրաբիւն և ուտին է (էջ 104)                   |
| Հարկինոս | (էջ 153) — կարկինոս, որ թարգմանի խեցգետին (էջ 143)                  |
| Երբիւն   | (էջ 181) — եփնէիս, որոյ այսպէս թարգմանի անուն իւր՝ նաւակալ (էջ 153) |
| Հարս     | (էջ 184) — կիկնոս, այս ինքն փոքր կամ ձկնափաղ (էջ 175)               |
| Հարս     | (էջ 185) — շերաս, այս ինքն կերպասալիւ (էջ 177):                     |

Ուսումնասիրողներից Հ. Թորոսյանը «կարկինոս», «երինէիս» և նման անվանումների առիթով նկատում է, որ թարգմանիչը դժանց հայերեն զուգահեռները չգտնելու պատճառով հունարենն է փոխանցում հայերենի: Նա գրում է. «Հարս — որ է «խեցգետին, խեչափաղ»։ Թարգմանիչը կոչն է կարկին-

<sup>31</sup> М і е п с, նշվ. աշխ., հատ. 29, էջ 161:

<sup>32</sup> «Վեցօրեայի», էջ 153:

նոս»<sup>33</sup>, «...» — որ է «նաւակալ» ձուկը՝ թարգմանութեամբ բառին. թարգմանիչը նախ կ'դնէ «եքենէիս»<sup>34</sup>, Բայց դժվար չէ նկատել, որ նշված բառերի՝ թորոսյանի կողմից առաջագրվող «խեցգետին, նաւակալ» հայերեն անվանումները կան «Վեցօրեայում»: Ավելին, ինչպես տեսնում ենք, բնագրի «միւրիկէ»-ն թարգմանիչը քաջատրում է (թարգմանում է) «ջրարբին», «կիկ-նոս»-ը՝ «փոր կամ ձկնաքաղ», «շերասը»՝ «կերպասաբեր» և այլն: Նշված օրինակները միաժամանակ հիմք են տալիս պնդելու, որ բաղմամբիլ հունարեն անվանում-աբաղաձայնություններ փոխանցվում են հայերենի ոչ թե դրանց հայերեն համարժեքների չգոյություն կամ թարգմանիչի չիմացության պատճառով, այլ «Վեցօրեայի» թարգմանության բնույթով թելադրված:

«Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը գնահատելու, նրանում առկա ոչ միօրինակությունը ընդգծելու իմաստով կարևոր է նաև հետևյալ փաստը. թարգմանիչը երբեմն այս կամ այն ծառատեսակի հունարեն անվան թարգմանությունը զուգահեռ տալիս է լրացուցիչ մեկնություն: Այսպես, օրինակ, «Վեցօրեայի» բնագրում կարդում ենք. «...»<sup>35</sup> (ուստի վայրի թղենիները աճեցնում են ընտանիների հետ): Բնագրի վկայակոչված նախադասության դիմաց հայերեն թարգմանության մեջ կարդում ենք. «Քանզի գոյի թղենիս, որ անուանակալ կոչի կատաղենիս, այսինքն վայրի մոլաթուղ. և բերեն տնկեն զնա առ ընտանի թղենու»<sup>36</sup>: Ինչպես շատ այլ դեպքերում, հայերենը չունի բնագրի սկզբնական և ուղեկցվում է առանձին բառային հավելում-քաջատրում: Բնագրի «...»-ը (հոգնակի հայցական, եզակի՝ «...» — թղենի) թարգմանված է «կատաղենիս»: Բայց, չբավարարվելով դրանով, թարգմանիչը վկայակոչում է բառիս բոլոր հոմանիշ կիրառությունները և, փաստորեն, հունարեն նշված բառը ստանում է եռակի քաջատրություն՝ «թղենի-կատաղենիս-վայրի մոլաթուղ»:

«Վեցօրեայի» հայերեն թարգմանության ինքնատիպության գնահատման իմաստով կարևոր է նկատել, որ նրանում միևնույն երևույթի նկատմամբ երբեմն երկու տարբեր մոտեցում կա: Այսպես, օրինակ, նկատեցինք, որ բնագրի «...» (էջ 149) յոթերորդ ձառում նույնությամբ փոխանցվել է հայերենի՝ «ենքեղեն» (էջ 141): Թարգմանության և բնագրի համադրումից պարզվում է, որ նույն անվանումը ութերորդ ձառում թարգմանվել է «մմեխ և մրմ-ղուկ»: Հունարենում կարդում ենք. «...»<sup>37</sup>: Նույնի հայերեն թարգմանությունում ասված է. «Եւ մմեխ և մրղուկ ոչ այլ ուստեք լինի, այլ ի սկոյ և յաղտոյ ջուրց»<sup>38</sup>:

Միևնույն երևույթի նկատմամբ եղած տարբեր մոտեցումը և առհասարակ բաղմամբիլ ոչ միօրինակությունները արդյոք հիմք չեն տալիս ենթադրելու,

33 Չ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 335:

34 Мигуе, նշվ. աշխ., հատ. 29, էջ 112:

35 «Վեցօրեայ», էջ 98:

36 Мигуе, նշվ. աշխ., հատ. 29, էջ 189—192:

37 «Վեցօրեայ», էջ 183: Հայերեն թարգմանությունում միևնույն երևույթի նկատմամբ երկու տարբեր մոտեցման առկայությունը հավաստվում է նաև նրանով, որ բնագրի հիշյալ բառը վերևում նշված երկու դեպքերում էլ «Վեցօրեայի» ուստերեն թարգմանությունում թարգմանված է «մմեխ և մրղուկ», այսինքն ճիշտ այնպես, ինչպես բնագրում է («Шестогоднєв», էջ 104, համառ., էջ 133):

որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը մեկ մարդու գործ չէ<sup>38</sup>, մանավանդ որ վկայություն ունենք, թե այն թարգմանվել է ձեռամբ «ճշմարտաբանից քարգմանչաց», «երկու քարգմանչաց», թերևս որի պատճառով էլ «ուրոյն ուրոյն են»:

Ուսումնասիրողների կարծիքով «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը ազատ է և քիչ համադրելի հունարեն բնագրին: Վասն զի այնպիսի ազատօրեն համարձակութեամբ ճախր առնալ սլանայ հայ թարգմանիչս,— ասված է հրատարակության Առաջաբանում,— մինչ զի յուրով ուրեք անմարթ էր նըշմարել զնա ընդ հետս շաւղաց բնագրին, և բանիցն թել ոչ ինչ լուծումն շնորհէր»: Իսկ նոր հայկազյանի բառարանագիրները «Վեցօրեայի» առկա թարգմանությունը որակում են «... կարի ընդարձակեալ ոճով՝ ըստ իմաստից ևեթ յարմարեալ յոյն բնագրին...»<sup>39</sup>: Հայագետ Ա. Սուբրյանը ևս գտնում է, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը ազատ է, քիչ համադրելի բնագրին: Նա գրում է. «Վեցօրեայն Բարսղի ընտիր և ողորկ հայկալեզու փափկավանկ գրչի մը հանդիպած կերևի. թարգմանն բանաստեղծ է քան զհնդինական, ավելի հարգարուն և զարգարուն պարբերությամբք»<sup>40</sup>: Հայերեն թարգմանությանն «ազատ» բնորոշումն են տվել բանասերներ Ս. Նազարեթյանը, Գ. Նահապետյանը, Հ. Թորոսյանը<sup>41</sup>:

«Վեցօրեայի» թարգմանությունը, հիմալի, միատարր չէ: Թարգմանության և բնագրի համադրումը ցույց է տալիս, որ հայերեն թարգմանության բնույթը խմբավորելի է հիմնականում երկու կետերում՝ թարգմանության ու բնագրի համընթացություն և թարգմանության ընդարձակում: «Վեցօրեայի» հայերեն թարգմանությանն անդրադարձած բանասերների հիմնական հոգացությունը, ինչպես և պետք էր սպասել, բնագրի և թարգմանության անհամապատասխանության վեր հանումն է եղել, քանի որ համապատասխանությունները բնականոն են: Կան բազմաթիվ էջեր, որոնցում հայերեն թարգմանությունը գրեթե նույնական է բնագրին: Այսպես, օրինակ՝

#### Բնագիր

„Μὴ οὖν ἀναρχα φανταῶν, ἀνὴρωπε.  
τὰ ὁρωμενα. μετῴ, ἐπειδὴ καλὸς περὶ  
ρεχεται κατ' ὁράων χινοῦμενα. ἡ δὲ τοῦ  
κρίτου ἀρχὴ τῆ περὶ τοῦ αἰσθητοῦ ἡμεῶν  
οὐκ ἐνδεχεται. ἀναρχὸν εἶναι νομίζεις τὸν  
καλὸν φανταῶν φανταῶν τῆν φανταῶν“ (էջ 9)։

#### Թարգմանություն

«Արդ մի՛ վրիպիցիս, ո՛վ մարդ,  
երթալ զկնի երևելի արարածոցս, և  
դնիցես անսկիզբն զսկզբնաւորս. և մի՛,  
վասն զի զքե ի վերայ քո անցանեն ի  
շրջելն իւրեանց յորժամ շարժին գնալ  
յերկինս, և մի՛ դարձեալ՝ վասն զի չէ  
դիրին մտաց մերոց կալ ի վերայ ի  
սկզբան աշխարհիս...» (էջ 6)։

<sup>38</sup> Անկյուրայի Ս. Աստվածածին վանքում 1703 թ. ընդօրինակված մի զրադիր ժողովածուում պահպանվել է այդ հավաստող հետևյալ հիշատակությունը. «Եւ արար մեկնիչ մի այլ ի Զ. Օրենքս զորոյն Բարսեղի Կեսարացոյն: Եւ զայն Գ զիրքն թարգմանեալ նոյն վարդապետն ի մեր լեզուս» (Բ ա Ր Գ ե ն կ ա թ ո ղ ի կ ո ս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս—Լիբանան, 1957, էջ 519, հմմտ. էջ 699)։

<sup>39</sup> ՆՆԲ, Առաջաբան, էջ 19։

<sup>40</sup> Ա. Ս ս ս ս ս ս, նշվ. աշխ., էջ 123։

<sup>41</sup> Ս. Ն ա գ ա Ր ե թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 484, Գ. Ն ս հ ա պ ե տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 395, Հ. Թ ո Ր Ո Ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 332։

Վկայակոչված հատվածները հիմնականում նույնական են: Մասնակի տարբերություն առկա է հատվածների վերջնամասում, ուր բնագրի «*ՀԱՅԿԻՆԻՍ*» (բնութիւն) թարգմանված է «աշխարհ» բառով: Կեսարացու զգուշացումը հատվածի վերջնամասում այն է, որ «մեզ շրջապատող բնությունը անսկիզբ է», որովհետև նա այն միտքն է դարգացնում, թե շրջապատող բնության, աշխարհի միակ արաբողը աստված է: Եվ ահա հայերեն թարգմանությունում նշված միտքը մատուցվում է մի փոքր նկարագրական մոտեցմամբ. «Վասն զի չէ դիրտին մտաց մերոց կալ ի վերայ ի սկզբան աշխարհիս», որը թերևս կարելի է բացատրել թարգմանչի ոճավորմամբ, այսինքն՝ սկիզբ ունի աշխարհը, բայց այն դյուրությունքն է մեզ համար, քանզի արարչի գործն է: Վկայակոչենք մեկ այլ օրինակ.

Բնագիր

ἡ Ἥρα δὲ τινεὺς τῶν κωνεῶν καὶ τὸ  
 ἰουστουδῆς τῶν ὀρεξέων κατεμάρασαν· καὶ τῶ  
 ἐλλεθόρῳ πολλὰ τῶν γρόνιων παύων ἐξε-  
 μώλευσαν (τξ 101):

Թարգմանություն

«Լ Կոնիտլն արմատովն զըրջեալ ուղիղ և զխելս ուղղեն, և եղեբորոս արմատովն զՀինօրեայ զցաւսն ցածուցանեն» (էջ 89):

Այստեղ հայերեն թարգմանությունում անտեսվել է բնագրի ընդգծված «*παιδιά*» (շատ) բառը և «*τις*»-ը (արմատ): բնագրի մեկ կիրառություն դիմաց օգտագործվել է երկու անգամ՝ հավանաբար «կոնիով» և «եղեբորոս» բուսատեսակների արմատների բուժի: հատկությունը ընդգծելու նպատակով:

«Վեցօրեայ» ճառերի բնագրի և հայերեն թարգմանության նույնությամբ բաղմամբիվ օրինակներ կարելի է վկայակոչել: Համընթաց են բնագրին առանձին բուսատեսակների առանձնահատկությունների, աստղային համակարգությունների, կենդանիների, այսպես կոչված «սովորությունների», աճման, բազմացման առանձնահատկությունների և այլ նկարագրություններ, որոնք, Սուրբրյանի բնորոշմամբ՝ «աւելի ճշդագոյն կրնժանան բնագրին հետ...»<sup>32</sup>:

Ինչպես նկատված է և պարզվում է համեմատությունից, «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը առավել քննելի է բնագրային հեռացումների առումով, երբ «հայերեն թարգմանությունը ազատ և ըստ հաճոյս ընդլայնած է բնագրի խօսքերը և երբեմն նաև իմաստները»<sup>13</sup> կամ, «ազարեթյանի բնորոշմամբ՝ հայ թարգմանիչը «ազատ թարգմանության՝ վսեմ հայախոսության և նյութից ընդլայնմանց հետ կկցե գողտրիկ և իմաստուն համառօտ լուսաբանություններ»<sup>14</sup>:

Թարգմանիչը Կեսարացու այս կամ այն բացատրությունը թարգմանելիս հաճախ միջամտում է բնագրին, ավելացնում իր դատողությունները և, դրանով իսկ, թարգմանությունը տալիս մասամբ նկարագրական բնույթ: Օրինակ՝ բնագրում կարդում ենք. «Δὲ αὖ πάλιν ἦρχε τοῦ βασιλεὺς τοῦτο πάλιν ἐποίησεν ὁ βασιλεὺς κατεπαύσας»<sup>45</sup>. Վկայակոչված միտքը բնագրային ընթերցմամբ կլինեն՝ «Զի

42 11. 0 n e p p j m n, 624. m2/v., 52 124:

43 Գ. Ն ա հ ա ալ ե տ ի ա ն, նշվ. աշխ., էջ 395:

44 *U.*  $\gamma$   $\omega$   $\eta$   $\omega$   $\rho$   $\epsilon$   $\beta$   $\gamma$   $\omega$   $\zeta$ ,  $\zeta\gamma\eta$ .  $\omega\zeta\eta$ ,  $\xi\zeta$  522:

45 Migne, *Grh. wgh.*, *Swm.* 29, *lg* 101:

մանրագորաւ բժիշկք քուն ածեն քնահատաց»։ Մինչդեռ հայերենում ասված է. «Զի մանրագորաւ բազում անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաչաց»<sup>46</sup>։ Ինչպես տեսնում ենք, հավելում են «բազում անգամ» բառերը և բնագրի «քնահատացը» թարգմանություն-բացատրությամբ դարձել է «այնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաչաց»։

«Վեցօրեայի» հայերեն թարգմանության ընդարձակումները առավելապես նկատելի են այն նկարագրություններում, որտեղ քննվող խնդրի շուրջ Կեսարացու բացատրությունը վերապատմվում է թարգմանչի հավելում-տեղեկություններով։ Այս առումով ուշագրավ են կենդանական նկարագրությունները, որոնցում սևիական տեղեկությունները ի մի խառնելով հեղինակային նկարագրություններ, թարգմանիչը ստեղծում է, կարելի է ասել, ինչ-որ չափով նոր որակ։

#### Ֆնագիր

«(O) աքալնոչ տիչ յաքաչ չեռնիսիւ տօն  
օժտբնոյ՝ ճիւղ օնճալաւոչ ի ձգրա աստօն  
տիչն քերթնիւն տօն օժտբնոյ չեռնաւ՝ Ար-  
թալի չար քերթն տօն ճիւղն տիչ յաքաչ ի  
փոսիւ յապիւնաւաւ» (էջ 153)։

#### Թարգմանություն

«Կարկինոս, որ թարգմանի խեց-  
գետին, ցանկայ ուտել զմիս ղեռնոյ  
միոջ, որ անուանեալ կոշի ոստրէոս. և  
բանդի դժուարորս է ոստրէոսն, զի իբ-  
րև խեցեղէն պատեանս ունի շուրջ  
զիւրեաւ, և իբրև ընդ ամրածածուկ  
պարսպով զգուշացեալ պահի փափուկ  
մարմին իւրոյ կակուղ բնութեան, և  
մորթն ի վերայ սեպ և ողորկ խեցա-  
նման է, և այսպէս իմն կոչեն ղեռնոն  
զայն խեցէմորթ» (էջ 143)։

Արդ՝ բնագրում չեն բացատրված «կարկինոս» և «ոստրէոս» անվանումները, բայց թարգմանիչը հայ ընթերցողի համար անհրաժեշտ է համարել դրանցից առաջինը բացատրել «որ թարգմանի խեցեղետին», իսկ մյուսի համար ավելացնել «զեռնոյ միոջ, որ անուանեալ կոշի» լրացումը։ Հաջորդ նախադասության սկզբնամասը մոտավոր նմանությամբ է կապվում բնագրին. նախ բնագրի «ճիւղն» (=բայց) դարձել է «և քանդի», «քիւնն» (=ինքը)՝ «ոստրէոսն» և հավելում է «շուրջ ղիւրեաւ» արտահայտությունը։ Հայերեն հատվածի վերջնամասը գրեթե համադրելի չէ բնագրին, ուր ասված է. «Քանդի բնությունը անխոցելի պատյանով անվտանգել է ոստրէոսին»։ Այս նախադասության դիմաց հայերեն թարգմանությունում առկա է «և իբրև» սկսվածքով և «զայն խեցէմորթ» վերջով հատվածը։

Որոշ իմաստով իրավացի է Ա. Սուրբյանը գրելով. «Մինչ Բարսեղ լակոնական և իմաստասիրական գուսպ ոճը կնախադասե քան զընդարձակություն ոճո, ընդհակառակն հայ թարգմանն կախորժի բանաստեղծական թռիչք. շատ անգամ իր արևելյան պերճ հաղուստը, մայրաքաղաքի բեհեմոնները կսփռե հունական պարզության վրա, չըսեմ թե կբողարկե զայն և կընկղմե»<sup>47</sup>։

Աներկրա է «Վեցօրեայ» ճառերի թարգմանչի միջամտությունը բնագրին։ Եվ դա, թերևս, պետք է բացատրել գործի տեղայնացման միտումով։ Այդ ի-

<sup>46</sup> «Վեցօրեայ», էջ 89։

<sup>47</sup> Ա. Սուրբյան, նշվ. աշխ., էջ 123, հմտ. 2. Թոթոսյան, նշվ. աշխ., էջ 332։

մաստով «Վեցօրեայի» հայերեն թարգմանությանը պետք է նայել որպես ինչ-որ շարժում նոր ուղի, որ թարգմանության ընթացքում ընդմիջարկվել են թարգմանչի բազում բացատրություններ, և երբեմն էլ տեղայնացման երանգ ստացել Կեսարացու հարցադրում-լուծումներից շատերը: Համեմատությունից այն տպավորությունն է ստացվում, որ թարգմանիչը, ասես, մտահոգված է ոչ այնքան բնագրի այս կամ այն միտքը նույնությամբ փոխանցելով, որքան ամբողջ «Վեցօրեայի» բանաստեղծական հայերենով թարգմանելու նպատակադրմամբ: Թերևս դա է պատճառը, որ նա առանձնակի մտահոգություն չունի բնագրային անվանումների հայերեն զուգահեռները գտնելու, բնագրային հարադատությունը անխաթար պահելու խնդրում: Թարգմանիչների առաջ ծառացած էր շատ ավելի գործնական, քան գիտական խնդիր: Ժամանակի ըմբռնմամբ՝ կարևորը «Վեցօրեայ» ձառերում արտացոլված գաղափարները ունկընդրին հասցնելն էր, նրանցում արտացոլված վարդապետության հայերեն վերարտադրումը:

Ներկա քննությունը, հարկավ, այսօր հարցադրում կարող է դիտվել միայն: Ապագայում, երբ ի մի կհավաքվեն այլևայլ հավաքածոներում պահվող «Վեցօրեայի» գրչագրերը, կկազմվի ու կհրապարակվի «Վեցօրեայի» քննական-համեմատական բնագիրը, այն ժամանակ, ըստ էության, հնարավորություն կընձեռվի վերջնական խոսք ասելու «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մասին<sup>48</sup>:

#### ВРЕМЯ И ОРИГИНАЛ АРМЯНСКОГО ПЕРЕВОДА «ШЕСТОДНЕВА»

К. М. МУРАДЯН

(Резюме)

В арменистике давно считается принятым, что интересующий нас памятник переведен в V в. Изучение лексики и стиля «Шестоднева» позволило отнести труд Кесарийского к переводам первой половины V в. Я. Ташян и Н. Бюзандацн в свое время высказали предположение, что «Шестоднев» переведен с сирийского и, быть может, частично с греческого. Исследование показало, что армянский перевод «Шестоднева» восходит к греческому оригиналу.

<sup>48</sup> Այս խնդրում, անշուշտ, էական նշանակություն կարող է ունենալ նաև «Վեցօրեայի» հայերեն թարգմանության համադրումը նույնի ասորերեն թարգմանություն-խմբագրության հետ, որը, սակայն, հրատարակության չգոյության պատճառով այսօր հնարավոր չէ: Ասորագետների հավաստմամբ հունարենից կատարված ասորերեն թարգմանությունների անշան մասն է միայն հրատարակված ու քննված: Ասորական գրականությանը նվիրված լավագույն հետազոտություններում արձանագրված է նույն թարգմանության ձեռագրի գոյության փաստը միայն (տե՛ս В. Р а й т, Краткий очерк истории сирийской литературы. Перевод с английского К. А. Тугаевым, СПб., 1902, էջ 45, 226; Anton Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, էջ 78—79):